ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 31 ՀՈՒԼԻՍԻ 2015Թ.
№ 21 (364)
www.syuniacyerkir.am

Մթնաձորում Մութն է ծորում...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Իրանի դեմ պատժամիջոցների չեղարկումը եւ Արաքս գետի վրա կառուցվելիք հէկերի ճակատագիրը

Աշխարհաքաղաքական

Արաքս գետի հիդրոներուժի օգտագործման հայ-իրանական ծրագիրը մեկնարկել է 2001 թվականին: 2007-ին եւ 2008-ին այդ նպատակով ստորագրվեց միջկառավարական երկու համաձայնագիր, որոնք ժամանակին վավերացվեցին երկու երկրների խորհրդարանների կողմից: Ըստ տեխնիկատնտեսական հիմնավորման՝ Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել երկու հէկ. հայկական կողմում՝ Մեղրու հէկը, Իրանի կողմում՝ Ղարաչիլարի հէկը:

2012թ. նոյեմբերի 7-ին Մեղրու տարածաշրջանի Ալվանք համայնքի տարածքում տեղի ունեցավ Մեղրու հէկի հիմնարկեք, որին մասնակցում էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարար Մաջուդ Նամջուն:

Նախատեսվում էր հէկի շինարարությունն իրականացնել հինգ տարվա ընթացքում:

Հիմնարկեքի ժամանակ ելույթ ունեցողները խոսեցին նավթամթերատար խողովակաշարի եւ երկաթուղու շինարարության մասին նույնպես:

Երեք տարի է անցել այդ ժամանակվանից, սակայն որեւէ քայլ չի կատարվել Մեղրու հէկի շինարարությունը սկսելու ուղղությամբ:

Հայաստանի եւ Իրանի համապատասխան գերատեսչությունները մինչեւ հիմա պաշտոնական հայտարարություն կամ պարզաբանում չեն տարածել՝ շինարարական աշխա-

էջ 5

Արդյո՞ք գործող սահմանադրությունը խոչընդոտում է մեր պետական ընթացքին եւ ազգային առաջադիմությանը

Հայաց Սյունիքից

ՀՀ սահմանադրության նախագծի շուրջ զարգացումները մեր հասարակաքաղաքական կյանքի գլխավոր հարցն են դարձել այս օրերին: Հուլիսի 15-ին հրապարակված նախագծի առաջին յոթ գլուխը, հիրավի, նոր էջ է բացել երկրի ներքաղաքական կյանքում:

Արդեն իսկ, կարելի է ասել, հանրությունը բաժանվում է երկու մասի՝ նոր սահմանադրության կողմնակիցների եւ նոր սահմանադրության հակառակորդների. նախագծի քննարկումներին զուգահեռ, ըստ երեւույթին, կխորանա հանրության երկփեղկման միտումը:

Եվ, այդուհանդերձ, հանրությունը սպասում է կոնկրետ հարցերի շուրջ ծայր աստիճան անկեղծ, առարկայական խոսակցության, մտահոգող հարցերի վերաբերյալ ոչ երկիմաստ, հիմնավոր բացատրությունների, պարզաբանումների:

Այդ քննարկումների, պարզաբանումների գլխավոր դերակատարները պետք է նախեւառաջ լինեն մասնագետներն ու հատկապես սահմանադրագետները:

Իսկ մտահոգող, ռիսկեր ու անորոշություններ պարունակող հարցերը քիչ չեն: Դրանցից առաջինը, թեեւ ուշացած, բայց եւ արդիական է՝ իսկապե՞ս գործող սահմանադրությունը փոխելու (բարեփոխելու) կարիք կա, արդյո՞ք գործող սահմանադրությունը խոչընդոտում է մեր պետական ընթացքին եւ ազգային առաջադիմությանը, ժողովրդավարության հետագա խորացմանը: Եվ, առհասարակ, որո՞նք

են երկրի հիմնական օրենքը փոփոխելու շարժառիթները: Քսան տարվա մեջ երրորդ անգամ սահմանադրությանն անդրադառնալն այնքան էլ համահունչ չէ պարզ տրամաբանությանն ու ողջամտությանը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրի-Նախիջեւան սահմանագծում առավոտները խաղաղ են

Զինված ուժեր

Մեղրու եւ Ագարակի կամավորական ջոկատների հիմքի վրա 1993-ի սեպտեմբերի 2-ին ՀՀ պաշտպանության նախարարության հրամանի համաձայն կազմավորվեց գունդ եւ անվանակոչվեց Գարեգին Նժդեհի անվան 539 առանձին մոտոհրաձգային գունդ: Կազմավորման օրվանից գունդը մասնակցել է մի շարք ռազմական գործողությունների՝ մասնակցելով Մեղրու, Կապանի, Լաչինի, Զանգելանի, Ֆիզուլիի, Հորադիզի ուղղությամբ մղվող մարտերին: Պատահական չէ, երբ մտնում ես գնդի տարածք, առաջինը աչքիդ է զարնում շենքին փակցված Գարեգին Նժդեհի խոսքերը. «Մեռնել, բայց չպարտվել, չտեսնել հայրենիքը պարտված, չտեսնել պարտության ամոթանքը»: Գնդի կենտրոնում զորամասի առաջին հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր, գնդապետ Ղեւոնդ Հովհաննիսյանի քարե ներկայությունն է, կիսանդրու պատվանդանին վաղամեռիկ հրամանատարի պատգամն է. «Իմ գործը ես չեմ ավարտել, զինվորներին նվիրում եմ իմ մարտական ոգին, Մեղրու հանդեպ իմ ունեցած մեծ սերը, պահպանեք Մեղրին՝ Փոքրիկ Հայաստանը»:

Տարածաշրջանում զինադադար հաստատվելուց հետո (1994 թվականի մայիս) գնդի ստորաբաժանումները վերադարձել են մշտական տեղակայման վայր՝ Ագարակ քաղաք, եւ մարտական հերթապահություն են իրականացնում՝ պահպանելով Հայաստանի սահմանի հայ-ադրբեջանական (Նախիջեւան) շփման գծի հատվածը՝ Արաքս գետից մինչեւ Սիսիան: Սահմանում տիրող իրավիճակից էլ սկսում ենք մեր զրույցը գնդի հրամանատարի մարտական գծով տեղակալ, փոխգնդապետ Վահան Յայլոյանի հետ. **«Մեր տարածաշրջանում գնդի պահպանությանը վերապահված սահմանի հատվածում իրավիճակը կայուն է, հակառակորդի հետ շատ խնդիրներ չենք ունենում: Ես ծառայել եմ Նոյեմբերյանում, որի գյուղերը պարբերաբար գնդակոծվում էին հակառակորդի կողմից: Եղել է դեպք, երբ մարտ եմ ղեկավարել, բայց այստեղ նման խնդիր չունենք: Հակառակորդն ուզում է որոշակի դիրքերում առաջ գալ, ամրապնդվել, բայց մեր մարտիկները միշտ կասեցնում են նրա դիրքային առաջխաղացումը: Եթե փորձում են որեւէ դիրք գրավել՝ դրան հակառակ մենք մի ճնշող դիրք ենք ստեղծում»:**

Օրեր առաջ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը լրատվամիջոցներին հայտնել էր, թե հայկական զինուժն Ադրբեջանի հետ սահմանագծին դիրքային բարելավում է ունեցել: Պաշտոնական տե-

էջ 4

Մարզի համայնքների համաչափ զարգացումը՝ մարզպետարանի գործունեության սկզբունք

Տարածքային կառավարում

ՀՀ վարչապետին մի խումբ սիսիանցիների ուղղած բաց նամակի հետքերով փորձեցինք մարզպետարանի քաղաքաշինության վարչությունից պարզել, թե առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ 2015թ. պետբյուջեով նախատեսված գումարն ինչպես են բաշխում մարզի համայնքների միջեւ:

Հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք ՀՀ կառավարության աշխատանքային ծրագրի կապակցությամբ նամակում մասնավորապես նշվել է, որ Սիսիանի ճանապարհներն ավելի վատ վիճակում են, բայց Գորիսի միայն Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգման համար 60մլն դրամ է հատկացվել, այն դեպքում, երբ ողջ Սիսիանին բակերի նորոգման համար բաժին հասավ ընդամենը 16մլն դրամ: *«….Մեր կառավարության համար չպետք է լինի արտոնյալ քաղաք: ….Ոչ համաչափ հատկացումները տանում են համայնքների ոչ համաչափ զարգացման»,* – նշված է նամակում:

Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ռազմիկ Ավետիսյանը նշեց, որ այս տարի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հանրապետության 10 մարզին առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար տրամադրվել է 4մլրդ 395մլն դրամ, որից 300 մլն դրամ՝ Սյունիքի մարզին: **«Նախապես կազմվել էր 720 մլն դրամի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ցանկ, բայց կառավարությունը, նպատակահարմարությունից ելնելով, այդ ցանկից ընտրել է յոթ օբյեկտ, որ կազմում է 233 մլն դրամ»,** – նշեց Ռ.Ավետիսյանը:

2015թ. Սյունիքի մարզին հատկացված առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար հատկացված գումարով կկատարվեն հետեւյալ շինարարական աշխատանքները. Սիսիան համայնքի Գայի 4, 10, 14, Սիսական 46ա, 9, 11, 13, 15, 19, Ադոնցի 3, Խանջյան 1ա եւ 3ա բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում եւ ասֆալտապատում՝ 16 մլն 200 հազար դրամ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում՝ 20 մլն դրամ, Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգում՝ 25 մլն 800 հազար դրամ, Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում՝ 45 մլն դրամ, Գորիս համայնքի Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգում եւ ասֆալտապատում՝ 40 մլն դրամ, Գորիս համայնքի Վ.Մամիկոնյան թաղամասի բարեկարգում եւ ասֆալտապատում՝ 58 մլն դրամ, Կապան քաղաքի Ա.Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի վերանորոգում՝ 28 մլն դրամ:

Ռազմիկ Ավետիսյան, Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

«Նախնական տարբերակում ներկայացրել ենք 16 օբյեկտի նորոգման հարց, բայց քանի որ կառավարության՝ հուլիսի 14-ի որոշման նախագծում վերոնշյալ յոթ օբյեկտն է ընդգրկվել, մենք մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների նոր ցանկ ենք կազմել՝ ներառելով դուրս մնացածները, որ կքննարկենք եւ կներկայացնենք ՀՀ կառավարություն: Հավանական է, որ որոշ ժամանակ անց լրացուցիչ գումար տրամադրվի կամ հայտնվի դոնոր կազմակերպություն՝ այդ խնդիրները լուծելու համար», – նշեց վարչության պետը:

Բացի սրանից՝ պետբյուջեից՝ հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների համար հատկացված գումարից 56մլն դրամ տրվել է որպես ընթացիկ սուբվենցիա համայնքներին, այսինքն՝ համայնքների խնդիրները համաֆինանսավորմամբ լուծելու համար. **«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ»** ՊՀ-ի կողմից Վաղատուր համայնքում իրականացված գազիֆիկացման աշխատանքների համաֆինանսավորման նպատակով Վաղատուր համայնքին պետական աջակցության ցուցաբերում՝ 12մլն 880 հազար դրամ, Խոզնավար համայնքում իրականացված գազիֆիկացման աշխատանքներ՝ 13մլն 670 հազար դրամ, Խանածախ համայնքում իրականաց-

էջ 5

Հիմնանորոգվում է Մ2 մայրուղու ամենադժվար անցանելի հատվածը

Ճանապարհաշինություն

Հունիսի 2-ից մեկնարկել է Մեղրի-Քաջարան մայրուղու ամենաբարձր հատվածում՝ Դիբագի լեռնանցքում՝ 2535մ բարձրության վրա, մոտ 4,3 կմ ճանապարհի հիմնանորոգումը, որտեղ ձմռան ամիսներին լուրջ դժվարություններ էին առաջանում: Աշխատանքներն իրականացնում է «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան), ծրագրի արժեքը 478 մլն դրամ է:

Ինչպես տեղեկացրեց աշխղեկ Գրիշա Թումանյանը, Մ2 միջպետական մայրուղու 339-344կմ հատվածում հիմնանորոգում է կատարվում: Հիմնական նպատակն է լայնացնել ճանապարհը, ասֆալտապատել, կատարել հողային աշխատանքներ՝ սողանքներից խուսափելու համար: 340-341-րդ կմ հատվածում հատկապես ձմռանը սողանքի հետեւանքով ճանապարհը փակվում էր, ներկայումս՝ ճանապարհի լայնացման դեպքում, հոսքերն այլեւս վտանգ չեն ներակայացնի, ինչպես նաեւ մաքրման աշխատանքները հնարավոր կլինի ավելի արագ կազմակերպել: **«Մայրուղու հատկապես 340-րդ կմ-ում ձմռանը խցանումներ էին առաջանում բուք ու բորանի հետեւանքով, եւ ճանապարհն անանցանելի էր դառնում: Ճանապարհի լայնացման արդյունքում կխուսափենք այդ խնդիրներից»,** - նշեց Գ.Թումանյանը: Ճանապարհը, միջին հաշվով, լայնացվում է 60-70 սմ-ով, որոշ տեղերում՝ նույնիսկ 1 մ-ով: Մեր այցելության պահին ճանապարհին կատարվում էին տարբեր աշխատանքներ՝ հողային, ասֆալտապատման: Ի դեպ, որպես արհեստական կառույց՝ ջրահեռացման համար տեղադրվող խողովակներ նախկինում չեն եղել:

Շինարարության կարեւորագույն մասը ճանապարհի 340-րդ կմ-ի ամենանեղ հատվածում հենապատի կառուցումն է: Մոտ 6մ բարձրությամբ, 26մ երկարությամբ հենապատով լուծվում է այդ հատվածի շրջադարձը լայնացնելու խնդիրը, որ հաճախ էր վթարների պատճառ դառնում:

«Ճանապարհի դիմացկունության հարցը լուծված է, բետոնի ամրությունը՝ հաշվարկված, մեկուսացումը՝ արված: Աշխատանքների ավարտից հետո ունենալու ենք բարեկարգ ճանապարհ, ձյունը մաքրելու աշխատանքներն ավելի արագ են ընթանալու, նվազագույնին է հասցվելու սողանքների վտանգավորության աստիճանը», – նշեց աշխղեկը:

Աշխատանքները, որոնց մասնակցում է 30-40 հոգի, կատարվում են նորագույն տեխնիկայով եւ որակյալ շինանյութով: **«Ոչնչի պակաս չունենք»,** – նշեց Գ.Թումանյանը:

Նախագծով հիմնանորոգման աշխատանքների համար 150 օր է նախատեսվել, բայց, ինչպես տեղեկացրեց աշխղեկը, ամեն ինչ անում են ժամանակից շուտ ավարտելու համար: Ինչ վերաբերում է ասֆալտի հաստությանը, այն ըստ նախագծի է որոշվում:



Գրիշա Թումանյան, աշխղեկ

Նշենք, որ շինարարական աշխատանքների ընթացքում առաջին անգամ կիրառվում է գեոգրիտ եղանակը (ասֆալտապատելուց առաջ հատուկ ցանց են փռում, որ հետագայում կասեցնում է ասֆալտի ճաքճքելը): Այս եղանակով ճանապարհի նորոգումը վաղուց է կիրառվում ճանապարհաշինարարության մեջ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գյուղատնտեսություն

Առաջաձոր. 123 տնից 65-ը փակ դուռ ունի

Կապանի տարածաշրջանի Առաջաձոր գյուղը Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ հիշատակվում է Տաթեւի վանքի հարկացուցակում Բաղք գավառի բնակավայրերի ցանկում Պարքոն գրությամբ, որ Տաթեւի վանքին մուծում էր վեց միավոր հարկ: Առաջաձորի բնակիչների մի մասը բնիկ է, մյուս մասը եկել է տարբեր տեղերից՝ Ղարաբաղի Առաջաձոր գյուղից (1760-1770-ին), Գողթնից (1805-1806-ին), Ղարադաղից (1829-ին):

Հետաքրքիր է, որ Առաջաձորից նաեւ արտագաղթել են. 20-րդ դարի սկզբներին Գորիս-Կապան խճուղու միջնամասից ձախ ստեղծվել է Նոր Առաջաձոր գյուղը, որի բնակիչները եկել էին Կապանի Առաջաձոր գյուղից: 1960-ական թվականների վերջերին Նոր Առաջաձորը գյուղերի խոշորացման հետեւանքով լքվել է:

Ըստ Թադեւոս Հակոբյանի «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի՝ գյուղը 1897թ. ուներ 627 բնակիչ, 1926-ին՝ 561, 1937թ.՝ 575, 1959թ.՝ 351, 1970-ին՝ 316, 1979 թվականին՝ 202 բնակիչ: Առաջաձոր գյուղը նախկինում հայտնի էր այգեգործությամբ, ջուլհակագործությամբ, ինչպես նաեւ առեւտրով: **«Առաջաձոր երկիրը պտղաբեր է եւ հավելված պտուղն առաքի ի կողմանի Նախճվանա: Ունի եւ ընտիր ձեռագործ անվանյալ Կապանա կտավ»** (Ղեւոնդ Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893): Խորհրդային տարիներին Առաջաձորի տնտեսությունը միավորվել էր Նորաշենիկի կաթնանասնապահական պետական տնտեսության հետ: 1991-ին որպես առանձին վարչական միավոր ստեղծվել է Առաջաձորի գյուղական խորհուրդը՝ տարանջատվելով Նորաշենիկի գյուղխորհրդից:

2002 թվականից Առաջաձորի համայնքապետը Դավիթ Մովսեսյանն է:

Դավիթ Մովսեսյան. ծնվել է 1959թ. Կապանի Առաջաձոր գյուղում: Ուսումնական կրթություն է ստացել գյուղի, միջնակարգ՝ N27 գիշերօթիկ դպրոցում: 1977-79թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1980 թվականին ընդունվել եւ 1984 թվականին ավարտել է Երեւանի մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի մաթեմատիկայի ֆակուլտետը: Գործուղվել է աշխատելու Առաջաձորի միջնակարգ դպրոց, որտեղ մաթեմատիկա է դասավանդել հինգ տարի: 1989 թվականին ընտրվել է Նորաշենիկի միացյալ գյուղխորհրդի նախագահ մինչեւ 1993 թվականը, երբ Առաջաձորի գյուղխորհուրդը տարանջատվեց Նորաշենիկից: 1993-1996թթ. եղել է Առաջաձորի գյուղխորհրդի նախագահ: 1997-2002թթ. աշխատել է Կապանի անշարժ գույքի կադաստրում՝ առաջատար մասնագետ: 2002 թվականին ընտրվել է Առաջաձոր համայնքի ղեկավար եւ պաշտոնավարում է մինչեւ այսօր:

Ամենքարտ

Առաջաձորի երեւելի մարդիկ

Առաջաձորը հայտնի է իր երեւելի մարդկանցով: Նախախորհրդային շրջանում գյուղում կարեւոր դեր էին խաղում Մելիք-Ստեփանյանները: Նրանցից են՝ Անդրիաս (Անտոն) բեկ Մելիք-Ստեփանյանը (նահանգային քարտուղար), նրա եղբայրները՝ Մանուչար բեկ եւ Դավիթ բեկ Մելիք-Ստեփանյաններ, ազգականը՝ Ստեփան բեկ Մելիք-Ստեփանյան: Մելիք-Ստեփանյանների տոհմից Գերմանիայում կրթություն էր ստացել Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանը (լեռնային ինժեներ), ով հետագայում դարձավ ճանաչված մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ: Ցավոք, նա էլ զոհ գնաց ստալինյան բռնաճնշումներին: Գյուղում է գտնվում Մելիք-Ստեփանյանների տոհմական դամբարանը: Գյուղի կենտրոնում է Մելիք-Ստեփանյանների կառուցած Սուրբ Ստեփանոս եկեղեցին (1480թ.):

Առաջաձորում են ծնվել նաեւ անասնաբուծական - անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաղինակ Ոսկանյանը, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Հրանտ Ոսկանյանը, ճանաչված ֆուտբոլիստ եւ մարզիչ Գրիգոր Համբարձումյանը, Ռոբերտ Էջանանցին:

Գյուղի կենտրոնում Հայրենական մեծ պատերազմում զոհված առաջաձորցիների հիշատակը հավերժացնող հուշակոթողն է՝ կառուցված է 1959 թվականին, ըստ Ա.Մկրտչյանի «Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում» հուշամատյանի: Նույն այդ աղբյուրի համաձայն՝ Երկրորդ աշխարհամարտին Առաջաձոր գյուղից մասնակցել է 111 հոգի, որից 11-ը՝ աղջիկ: Մեծ հայրենականի ռազմադաշտերից չվերադարձավ 50 մարտիկ, զոհվածներից 28-ը չէր հասցրել ընտանիք կազմել…

Մերօրյա ազատամարտում՝ Արցախյան պատերազմում, գործուն մասնակցություն ունեցան առաջաձորցիները: Մեծ հայրենականի հուշարձան-կոթողի կողքին կա հուշատախտակ, որին դաջված են Արցախյան գոյամարտում ընկած առաջաձորցիների անունները՝ Սոս Բաբայան, Աշոտ Գրիգորյան, Հարություն Հարությունյան:

Վերջին ժամանակներս գյուղի գերեզմանատան մուտքի մոտ եւս մի հուշաքար-հուշաղբյուր է կանգնեցվել՝ եզակի իր տեսակի մեջ: Այն նվիրված է ստալինյան բռնություններին ենթարկվածների հիշատակին: «Անմեղ մեղավորների հիշատակին» գրության տակ կարդում ենք առաջաձորցի բռնադատվածների անունները՝ Մելիք-Ստեփանյան Սմբատ, Ոսկանյան Դավիթ, Ոսկանյան Մուշեղ, Սահակյան Ստեփանոս, Բախշյան Սարգիս, Խաչատրյան Արշակ, Կոստանյան Անտոն, Շահնազարյան Շահեն, Գրիգորյան Արամ: Միանգամայն գովելի է անգերեզման այդ մարդկանց հիշատակի հավերժացումը: Գյուղապետ Դավիթ Մովսեսյանը տեղեկացնում է, որ մեկ կիլոմետր հեռավորությունից ջուր են քաշել, ջրահեռացման հարցը լուծելուց հետո հուշաղբյուրը կհագեցնի գերեզմանատուն այցելողի ծարավը…

Գյուղը գնալով մարում է…

Համայնքի բնակչությունը տխուր վիճակագրական պատկեր է ներկայացնում: 180 բնակիչ է գրանցված գյուղում: 20-րդ դարի առաջին կեսին բնակչության թիվն անցնում էր 500-ից, երկրորդ կեսում գնալով նվազել է:

Ծերացած գյուղ է Առաջաձորը, որի բնակիչների 90 տոկոսը թոշակառու է, 123 տնից 65-ը փակ դուռ ունի, օջախի վերջին տարեց անդամը մահանալուց հետո տան դուռը փակվում է առհավետ: **«Հնարավոր է, որ զավակները գան, ամռանը մի երկու շաբաթ հանգստանան,** – փոխանցում է մեր զրուցակիցը, – **բայց դա խնդրի լուծում չէ»:** Առաջաձորում դպրոցահասակ երեխա համարյա չկա: Եղածները հաճախում են Օխտար համայնքի դպրոցը: Համայնքապետն ասում է. **«Երբ դուրս եկա դպրոցից, դեռեւս աշակերտներ կային, դպրոցը փակվել է 1990-ականների կեսին: Ունեինք տիպային դպրոցի շենք, որ այժմ քանդված-գնում է»,** – ափսոսանք կա նախկին մանկավարժի խոսքում: Մինչդեռ գյուղի ուրբամյա դպրոցը հիմնադրվել է 1898 թվականին: Անցյալ դարի առաջին քառորդում 30-ից ավելի աշակերտ է ունեցել…

Պտղի հարցում

գյուղացին մնում է Աստծո բարեհաճության հույսին

80-ականի կեսերին գյուղամիջում տեղ չկար, բոլորը տեղափոխվել էին գյուղ, մի թիզ հողի համար գյուղապետի բնորոշմամբ՝ գլուխ էին ջարդում, այգեգործական տնտեսություններ էին ստեղծվում, մարդիկ հողատարածք էին վերցնում առանձնատուն կառուցելու համար, մի մասը հասցրեց կառուցել, շենքերի մի մասի շինարարությունն անավարտ էլ մնաց: Իրողությունն այն է, որ այսօր գյուղն ունի 90 հեկտար վարելահող, որը վեր է ածվում խոտհարքի, բնականաբար, խոսք չի կարող լինել գարնանացանի կամ աշնանացանի մասին: Համայնքում տնամերձերի հողերն են մշակվում՝ մոտ 10 հեկտար: Գյուղաբնակն իր մեկ-երկու գլուխ անասունի ձմռան խոտի պաշարը դրսից է ձեռք բերում (սա եւս խոսուն փաստ է գյուղի ծերացման մասին):

Գյուղացու եկամտի մյուս «աղբյուրը» այգեգործությունն է. տնամերձերում տնկված ծառերը, տարի չկա, որ չտուժեն ցրտահարությունից, կարկտից, երաշտից: **«Մենք ծառ չենք կարողանում խնամել, մշակել, դա մեր թերությունն է,** – եզրակացնում է Դ.Մովսեսյանը, – **չգիտենք ծառի լեզուն: Ծառերը չենք սրսկում՝ վնասատուների դեմն առնելու համար, ժամանակին չենք ոռոգում: Մնում ենք Աստծո բարեհաճության հույսին: Ինչ վերաբերում է բանջարաբոստանային մշակաբույսերին, յուրաքանչյուրն իր ընտանիքի պահանջարկի չափով ցանում եւ փոքրիշատե բերքն էլ ստանում է: Հարկ եղած դեպքում բաժին են հանում քաղաքաբնակ իրենց զավակներին: Այսօր քաղաքաբնակի համեմատ գյուղաբնակ թոշակառուն ավելի ապահովված է իր տնամերձի հաշվին»:**

Գյուղի անասնագլխաքանակը հետեւյալ պատկերն է ներկայացնում՝ 28 խոշոր եղջերավոր, մեղվաընտանիք՝ մոտ 300, մոտ 200 թեւ ընտանի թռչուն, խոզ եւ մանր եղջերավոր անասուն չեն պահում: Այս ամենը թվարկելուց հետո ավելացնում են, թե գյուղում երեք ձի է մնացել, հինգ ավանակ: Ահա այս է առաջաձորցու ողջ տնտեսությունը:

Այս ամենի ֆոնին հուսադրողն այն է, որ համայնքը խմելու եւ ոռոգ-

էջ 5

Զինված ուժեր

Մեղրի-Նախիջեւան սահմանագծում առավոտները խաղաղ են

Զորամասի առաջին հրամանատար, գնդապետ Ղեւոնդ Հովհաննիսյանի կիսանդրին գնդի տարածքում

էջ 1 ղեկատվության համաձայն՝ Նախիջեւանի հետ սահմանին հակառակորդը կրակ է բացել հայկական կողմի ուղղությամբ՝ օգտագործելով մեծ տրամաչափի զենք, ինչի հետեւանքով մեկ հայ զինծառայող է զոհվել: **«Որքան էլ հրադադարի խախտման կանխամտածված դեպքեր լինեն, դրանք համարժեք պատասխան են ստանում՝ ռազմական ստորաբաժանումների որոշակի գործողությունների տեսքով: Մարտական համապատասխան գործողությունների շնորհիվ զսպման մեխանիզմներն այսօր ստեղծված են, որոնք նպաստում են հրադադարի ռեժիմի պահպանմանը»,** – ասել է պաշտպանության նախարարը եւ հավելել, որ ինժեներական կառուցվածքների կատարելագործման եւ դիրքերի բարելավման ուղղությամբ աշխատանքները Հայաստանի զինված ուժերի առաջին գծի զորամասերի համար շարունակական բնույթ են կրելու:

Այս առումով փոխգնդապետ Վահան Յայլոյանը փոխանցում է, որ շփման գծում զինծառայողներն ունեն բարձր մարտական ոգի: Նաեւ տեղեկացնում է, որ գնդի հրամանատարի տեղակալներից հենց ինքն է զբաղվում զինվորների մարտական պատրաստականությամբ, եւ քանի որ գունդը պետական սահմանի պահպանությունն իրականացնում է բարձր լեռնային գոտում, մշակել են լեռնային պայմանների համար մարտական պատրաստության ծրագիր:

«Մեր զինվորներն ավելի կոփված պիտի լինեն, որովհետեւ դիրքեր ունենք, որոնց հասնելու համար նրանք երկու-երեք ժամ ոտքով ճանապարհ են կտրում, սար ու ժայռ բարձրանում: Եթե մենք լրջորեն նրանց ֆիզիկական, մարտական, կրակային պատրաստությամբ չզբաղվենք, մեր առջեւ դրված խնդիրը չենք կարող կատարել: Ինչքան էլ զինվորին սովորեցնենք խրամատ փորել, դիրք գրավել, եթե նա սար բարձրանալ, կրակել չիմանա, ոգին տեղը չլինի, ապարդյուն կլինեն մեր ջանքերը. զինվորը չի կարողանա կռվել, պայքարել, կրակել հակառակորդի վրա, կթողնի զենքն ու կփախչի», – խորհրդածում է հրամանատարի տեղակալը:

Մեր զրուցակցին փորձում ենք նկատել տալ, որ հասարակության մեջ կարծիք կա, թե բանակ զորակոչվող երիտասարդների մի ստվար հատվածի ֆիզիկական պատրաստականությունը հեռու է բավարար լինելուց: Նա էլ էր այդ կարծիքին, բայց հավելեց, որ երիտասարդների բանակ զորակոչված օրվանից ձգտում են փոքրիշատե այդ բացը շտկել: Իսկ թե դա ում բացն է, ծնողների՞, թե՞ դպրոցի, փոխգնդապետը հաստատակամ էր այն պնդման մեջ, որ ֆիզիկական կոփվածք պատանին նախեւառաջ պիտի ստանա ընտանիքում: Ըստ նրա՝ դպրոցն ի զորու չէ նման խնդիր լուծել, նրա գործը գիտելիքներ ավանդելն ու դաստիարակություն տալն է:

Բանակը հասարակության հայելին է, բացառված չէ, որ փողոցային հոռի բարքերը ներթափանցեն զինվորական կյանք՝ պատճառ դառնալով զինծառայողների միջեւ ոչ կանոնադրական հարաբերությունների: Ի պատասխան մեր հետաքրքրասիրության՝ հրամանատարի տեղակալը փոխանցեց, որ իրենք ունեն նշանաբան՝ **«Բանակը մեր տունն է, մեր ամրոցը»: «Եվ մենք ապրում ու ծառայում ենք այն ամենով, ինչ հաստատված է զինվորական կանոնագրքերով: Այնպես չէ, որ հին ծառայողը նորակոչիկի վրա իշխանություն ունենա, որպիսին լինում էր խորհրդային բանակում»,** – հավաստում է հրամանատարի տեղակալը:

Փոխգնդապետ Վահան Յայլոյանը՝ ծնված 1980 թվականին, 2002 թվականին ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, ծառայության անցել Արմավիրի ուսումնական բրիգադում մինչեւ 2009թ.: Ապա Տավուշի մարզում ծառայել որպես գումարտակի հրամանատար՝ չորս տարի: Այնուհետեւ ընդունվել եւ ավարտել է նորաստեղծ հրամանատարաշտաբային դասընթացները, որոնք առաջին անգամ անցկացվեցին Հայաստանում: Ավարտելուց հետո ծառայությունը շարունակել է Նոյեմբերյանում որպես գումարտակի հրամանատար: Հինգ ամիս հետո առաջ է քաշվել եւ այժմ Ագարակի գնդի հրամանատարի տեղակալն է: Այս տարվա մայիսի 28-ին մարտական առաջադրանքը կատարելու համար (դա եղել է հունվարի 17-ին) պարգեւատրվել է «Արիության» մեդալով:

Մեր մյուս զրուցակիցը՝ մարտական հերթապահության գծով գնդի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Սուրիկ Հայրապետյանն Ագարակի գնդի «տարեգիրն» է, Արցախյան շարժման եւ Մեղրու տարածաշրջանում զինվորական կառույցի կազմավորման ակունքներում կանգնած անձնավորություն: Զինվորական ծառայությունը սկսել է որպես հետախուզական դասակի հրամանատար, հետո գումարտակի հրամանատար, իր գումարտակով կռվել է Հորադիզում: Այնուհետեւ նշանակվել է գնդի հրամանատարի տեղակալ սպառազինության գծով, այժմ կոորդինացնում է գնդի մարտական հերթապահությունը: Գնդի հիմնադիր-հրամանատար Ղեւոնդ Հովհաննիսյանի մարտական ընկերը, նաեւ վարորդն է եղել: Հիշում է, որ հանրապետությունում առաջիններից մեկն Ագարակի գնդին հանձնվեց մարտական դրոշ:

Նրա վաստակն էլ աննկատ չի մնացել: Այս տարվա հունվարի 28-ին՝ հայկական բանակի կազմավորման օրը, հանրապետության նախագահի ձեռամբ ստացավ «Արիության» մեդալ: Որպես երկարամյա զինվորական՝ նրանից հետաքրքրվեցինք, թե իր ծառայության տարիներին ինչ է փոխվել գնդում: Մեր զրուցակիցն էլ փոխանցեց, թե թիկունքային ապահովությունն այժմ բարձր մակարդակ ունի, թե մարտական հենակետերում, թե զորամասում զինվորը որակյալ սնունդ է ստանում, հանդերձանքի խնդիր չկա: **«Եթե գաք դիրքեր, կտեսնեք՝ մեր զինվորներն ինչ են անում, հարցերն ավելորդ կլինեն»,** – նկատում է փոխգնդապետը: Փորձառու զինվորականը դժգոհ չէ նորավարտ սպաների պատրաստականությունից, միայն ասում է, որ Մեղրու բնակլիմայական պայմաններին հարմարվելու խնդիր է ծագում ծառայության առաջին շրջանում:

Վահան Յայլոյան
Մարտական պատրաստության գծով գնդի հրամանատարի տեղակալ

Սուրիկ Հայրապետյան
Մարտական հերթապահության գծով գնդի հրամանատարի տեղակալ

Մեր զրույցի ավարտին զինվորականներին հարցրինք, թե ինչպիսին է բանակ-հասարակություն կապը: Նրանք խնդրեցին իրենց երախտագիտությունը փոխանցել այն կազմակերպություններին եւ մարդկանց, ովքեր կանգնած են բանակի կողքին եւ յուրովսանն նպաստում են նրա կայացմանը. Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյան, Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյան, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» եւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություններ (գլխավոր տնօրեններ՝ Յուրի Բերեզովսկի եւ Նիլ Ստիվենսոն), «Մեղրու ճանապարհների շինարարություն եւ շահագործում ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (տնօրեն՝ Ազատ Գասպարյան):

Հրաժեշտից առաջ հրամանատարի տեղակալներից ցանկացանք իմանալ, թե ինչ կուզեին փոխանցել զինվորների ծնողներին: **«Թող մեր զինվորների ծնողներն անհոգ մնան, չմտածեն, թե իրենց որդիները Հայաստանի ամենահեռավոր բնակավայրում են ծառայում: Մենք իրենց զավակներին չենք տարբերում մեր հարազատ երեխաներից: Ձեր զավակները հուսալի ձեռքերում են»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Շրջայց սահմանամերձ զորամասերում

Հուլիսի 21-22-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն աշխատանքային շրջայցով եղել է հանրապետության հարավարեւմտյան սահմանագոտում տեղակայված զորամասերում:

Երկօրյա շրջայցի ընթացքում պաշտպանական գերատեսչության ղեկավարը եղել է սահմանագոտու պահպանությունն իրականացնող զորամասերում, ստուգել սպառազինության եւ զինտեխնիկայի վիճակն ու պահպանման պայմանները, ինչպես նաեւ նախորդ այցերի ժամանակ տրված ցուցումների եւ հանձնարարականների կատարման ընթացքը: Նախարարը ծանոթացել է նաեւ զորամասերի սոցիալ-կենցաղային պայմաններին, հետեւել ընթացող կապիտալ շինարարական աշխատանքներին: Այցի ընթացքում պաշտպանական գերատեսչության ղեկավարին ուղեկցել են ՊՆ աշխատակազմի ղեկավար Գառնիկ Հայրապետյանը, բանակային զորամիավորումների հրամանատարներ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանն ու գնդապետ Տիգրան Փարվանյանը, բարձրաստիճան այլ զինվորականներ:

Սեյրան Օհանյանը եղել է նաեւ մարտական հենակետերում, հետեւել է դիրքերի մարտավարական բնագծի եւ ամրաշինական կառույցների բարելավման եւ կահավորման աշխատանքներին, ծանոթացել սահմանի տվյալ հատվածներում տիրող օպերատիվ իրավիճակին: Մարտական հենակետերում Սեյրան Օհանյանը զրուցել է դիրքապահ զինծառայողների հետ, ծանոթացել նրանց պատրաստությանն ու զինանձնակազմի շրջանում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին:

Աշխատանքային այցի շրջանակում բանակային զորամիավորումների ղեկավար կազմի հետ ճշգրտվել են առաջիկա անելիքներն ու ծառայության կազմակերպմանն առնչվող մի շարք հարցեր, առաջադրվել են խնդիրներ, տրվել են ցուցումներ եւ հանձնարարականներ՝ ընթացող աշխատանքներն ըստ սահմանված ժամանակացույցի եւ առավել արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

2015.07.22, mil.am

Շուտ են հարմարվում

Ազգային բանակ

Այս օրերին շատերն են սրտի տրոփյունով սպասում, թե իրենց որդին որ զորամասում կսկսի ծառայել: Ծնողների մի մասը հանգիստ շունչ է քաշում, երբ լսում է նորակոչիկ որդու զինծառայության վայրի մասին, մի մասն էլ առնվազն երկու տարի երկրի եւ աշխարհի համար խաղաղություն է խնդրում Բարձրյալից:

Ագարակի N զորամասում փորձեցինք զինակոչիկներից տեղեկանալ նրանց տրամադրության, բանակային կյանքին հարմարվելու դժվարությունների մասին: *«Բնական է, որ սկզբնական շրջանում դժվարությամբ հարմարվեցինք բանակային կարգուկանոնին, քաղաքացիական կյանքի առօրյայից դժվարությամբ անցանք մեր ներկայիս կյանքին: Բայց դրանք արդեն հետեւում են, եւ այսօր հատկապես ֆիզիկական պատրաստվածության, հոգեբանորեն զինվորական կյանքին տրամադրվելու առումով ես զգում եմ էական տարբերություն»,* - նշեց վեց ամսվա զինծառայող Ժորա Գասպարյանը (Եղվարդ քաղաքից):

Ծառայության հատկապես սկզբնական շրջանում ոչ միայն կարեւոր է հրամանատարության վերաբերմունքը, այլեւ ծառայակիցների: Այդ առումով այլեւս անցյալում է մնացել «խարոշիների» դասակարգը: *«Նրանց կարելի է Կարմիր գրքում գրանցել,* - կատակով նշեց վեց ամսվա ծառայող Ալեքսանդր Բատաեւը (Իջեւանի տարածքի Աղավնավանք գյուղից), *- եթե պիտի աշխատենք, ապա միասին, եթե պիտի հանգստանանք, միասին»:* Ա.Բատաեւը նշեց նաեւ, որ առաջընթաց ամեն առումով է նկատում, հատկապես ֆիզիկական կոփվածության, «ներկայումս 15 անգամ ձգում եմ կատարում»:

«Հրամանատարական կազմի հետ բարիդրացիական հարաբերություններ են, նրանք ամեն ինչ անում են, որ մեր ծառայությունն անցնի ոչ լարված մթնոլորտում», – նշեց Ժ.Գասպարյանը:

«Քաղաքացիական կյանքում մեծ տեղ չէինք հատկացնում ֆիզկուլտուրային, եւ այդ բացը հիմա զգում ենք: Դրանում ես միայն ինձ եմ մեղադրում, բայց իմ զավակների ֆիզիկական դաստիարակությանը հաստատ ավելի մեծ ուշադրություն կդարձնեմ», - ծիծաղելով ավելացրեց Ժ.Գասպարյանը:

«Մինչ զորակոչվելս պատկերացումներս բանակի վերաբերյալ բոլորովին այլ էին: Այժմ լիովին հարմարվել եմ այդ կյանքին, նույնիսկ հաճելի է ծառայելը», – նշեց վեց ամսվա ծառայող Հակոբ Հայրապետյանը: Իսկ երբ ասացինք, որ սիրած աղջկան թերթի միջոցով հաղորդագրություն ուղարկի, նա ասաց, որ դա «թաքուն կանի»:

Հարցին, թե արդյոք զորացրվելուց հետո կշարունակեն ծառայությունը, նրանք անկեղծորեն խոստովանեցին, որ դեռ չեն մտածել այդ ուղղությամբ:

Մանավանդ վերջին մեկ տարում, ցավոք սրտի, սահմանում դժբախտ դեպքեր շատ պատահեցին: Մեր այն մտահոգությունը, թե եթե հանկարծ պատերազմ լինի, նրանք պատրա՞ստ են կռվելու, զինվորները պատասխանեցին. *«Եթե Արցախյան պատերազմի տարիներին կամավորական ջոկատներով եւ որսորդական հրացաններով մենք հաղթանակ ենք տարել, ապա այսօր, Աստված մի արասցե, եթե պատերազմ լինի, հաղթանակը կրկին մերն է լինելու, քանզի ունենք հզոր բանակ՝ զինված նորագույն զինտեխնիկայով եւ բանիմաց հրամանատարական կազմով»:*

Անհամբերությամբ իրենց սպասող ծնողներին ու հարազատներին ժամկետային ծառայողները մաղթեցին համբերություն եւ «թող հպարտանան, որ իրենց որդին ծառայում է հայոց բանակում»:

Ի դեպ, զինվորները, որոնց հետ զրուցեցինք, Ագարակի զորամասի մոտոհրաձգային վաշտից էին եւ այս զորամաս են տեղափոխվել N ուսումնական զորամասի դասընթացներն ավարտելուց հետո:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարզի համայնքների համաչափ զարգացումը՝ մարզպետարանի գործունեության սկզբունք

էջ 2

ված գազիֆիկացման աշխատանքներ՝ 28 մլն 960 հազար դրամ, Սպանդարյան համայնքում իրականացված գազիֆիկացման աշխատանքներ՝ 490 հազար դրամ:

Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարված ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ սուբվենցիա է տրամադրվել՝ Գորիս քաղաքի թիվ 4 ՆՈՒՀ-ի սանհանգույցների վերանորոգում՝ 4 մլն դրամ, Կապան քաղաքի թիվ 8 ՆՈՒՀ-ի եւ Կավարտ բանավանի մասնաճյուղի սանհանգույցի վերանորոգում՝ 4 մլն դրամ:

Նախագծահետազոտականծախսերը կազմում են 3 մլն դրամ, ընդհանուր առմամբ 300 մլն դրամ է պետբյուջեից 2015թ. մարզին տրամադրվել՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար:

Մեր հարցին, թե ինչպե՞ս է որոշվում, թե որ օբյեկտի նորոգման համար պիտի գումար հատկացվի, վարչության պետը պատասխանեց, որ մարզպետարանի համար էական չէ, թե մարզի որ անկյունում գումար կներդրվի, կարող է, օրինակ, Մեղրու տարածաշրջանի Նռնաձոր գյուղում վթար տեղի ունենա, եւ այդ 300 մլն դրամը հատկացվի այդ խնդրի լուծմանը: Այսինքն՝ առաջնահերթ սկզբունքն առկա խնդիրների հրատապությունն է:

«Մարզպետարանում խորապես ուսումնասիրվում է յուրաքանչյուր խնդիր եւ ըստ հրատապության լուծում ստանում, որ, բնականաբար, միտված է տարածաշրջանի համաչափ զարգացումն ապահովելուն: Որպես վարչության պետ կարող եմ ասել, որ մարզի համար այսօր հրատապ են հատկապես շենքերի տանիքների եւ բազմաբնակարան շենքերի վերելակների, հանրակրթական եւ մասնագիտական դպրոցների, ՆՈՒՀ-երի նորոգման հարցերը», – նշեց Ռ.Ավետիսյանը:

Վարչության պետից տեղեկացանք նաեւ այս պահին մարզում իրականացվող ծրագրերի մասին, որոնց պարբերաբար անդրադառնում ենք թերթի էջերում: Մասնավորապես նա նշեց Կապանի եւ Մեղրու հիվանդանոցների հիմնանորոգման եւ կառուցման, տարբեր համայնքներում ներքին ջրատար ցանցի, հատկապես Սիսիանի տարածաշրջանում ճանապարհների հիմնանորոգման, մարզի դպրոցների եւ մանկապարտեզների նորոգման մասին:

Ընդհանուր առմամբ 2012-15թթ. մարզում կատարվել են 22 մլրդ 229 միլիոն 911 հազար դրամի աշխատանքներ, որից՝ 8 մլրդ 340 մլն 953 հազար՝ Կապանի տարածաշրջանում, 4 մլրդ 523 մլն 547 հազար դրամ՝ Գորիսի տարածաշրջանում, 5 մլրդ 568 մլն 890 հազար դրամ՝ Սիսիանի տարածաշրջանում, 3 մլրդ 796 մլն 519 հազար դրամ՝ Մեղրու տարածաշրջանում: Նշենք, որ աշխատանքները կատարվել են պետբյուջեի, Համաշխարհային եւ Ասիական բանկերի, տարբեր հիմնադրամների եւ կազմակերպությունների միջոցներով՝ մարզպետարանի միջնորդությամբ:

Առաջին հայացքից թվում է, թե ծանրության կենտրոնը մարզի քաղաքներն են, բայց **«Վերջերս Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյանի հետ հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ ցանկալի է՝ ծրագրերը հիմնականում ընդգրկեն դպրոցների եւ ՆՈՒՀ-երի նորոգման հարցերը: Մենք ներկայացրել ենք հիմնականում գյուղական համայնքների ՆՈՒՀ-երի վերանորոգման հարցերը»,** – նշեց Ռ.Ավետիսյանը:

Վարչության պետի տեղեկացմամբ՝ կառավարության որոշման համաձայն, քանի որ պիտի ՆՈՒՀ-երը նույնպես ներառվեին հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների մեջ, որոշ օբյեկտների նորոգման համար հատկացված գումարները կրճատել կամ հանել են:

Ինչ վերաբերում է սիսիանցիների՝ ՀՀ վարչապետին ուղղված նամակին, վարչության պետը պատասխանեց. **«Ես նման նամակներին միայն բացասական գնահատական կարող եմ տալ, իրենք պիտի վերլուծեն մարզ հասկացությունը, հետո նամակ գրեն: Եթե մի ընտանիք ունի չորս երեխա եւ այդ երեխաների միջեւ պիտի տարբերություն դրվի, ապա այն ընտանիք չէ»:**

Նամակ գրող նախաձեռնող խմբին էլ կարելի է հարցնել՝ համայնքային բյուջեով որոշ խնդիրներ լուծելու վերաբերյալ երբեւէ համայնքապետարանից հաշվետվություն պահանջե՞լ են:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջաձոր. 123 տնից 65-ը փակ դուռ ունի

էջ 3

ման ջրի խնդիր չունի, ներքին ցանցն էլ լրիվ նորոգվել է: 13 կիլոմետր հեռավորությունից (Չանախչիից) ոռոգման ջուր է հասցվել Առաջաձոր, եւ թեպետ այսօր վթարները հաճախադեպ են, բայց կարողանում են ժամանակին նորոգել ջրագիծը: Խմելու ջուրը գյուղ է հասնում յոթ կիլոմետր հեռավորությունից, մի անգամ խմելու ջրագիծը ներառվեց նորոգման ծրագրի մեջ, եւ հիմա ջրի կորուստներ չեն ունենում: Վերջին ժամանակներս մասնակի նորոգվել են գյուղի մշակույթի տունը, դրա տանիքը, կենցաղի տունն է հիմնանորոգվել, մայրուղուց դեպի գյուղ տանող ճանապարհը համեմատաբար բարվոք վիճակում է, յուրաքանչյուր տարի 200-250 քառակուսի մետր փոսային նորոգում են անում: Գյուղամիջի եկեղեցին ձեռնարկել են նորոգել, բայց գործը տակավին ավարտին չի հասցված… Գյուղը գազիֆիկացված չէ, ավելին՝ հայտնի չէ, թե երբ առաջաձորցին կօգտվի կապույտ վառելիքից: Ավանդական վառելիքը անտառից հայթայթած ցախն է մնում այս կողմերի մարդկանց օջախում բարեհարմարություն ստեղծելու միակ միջոցը:

Ո՞րն է իրավիճակից դուրս գալու ելքը

Գյուղը դատարկման եզրին է, ավելի վատ վիճակ դժվար է պատկերացնել: Ո՞րն է դրանից դուրս գալու ելքը: **«Եթե դու լիներիր պետության նախագահը կամ ունենայիր հզոր իշխանություն, ի՞նչ կանեիր»**, - հարցն ուղղում ենք համայնքապետին: Մի քանի բան է ասում նա՝ փոքր արտադրություն ստեղծել գյուղում, գյուղաբնակին ժամանակավորապես ազատել հարկերից, գյուղացուն վարկերն ավելի ցածր տոկոսով հատկացնել: Երկու-երեք երիտասարդ ընտանիք գյուղ տեղափոխվելով վիճակը չի շտկվի, իրավիճակը չի փոխվի. հակադարձում է մեր զրուցակիցը: Ի դեպ, գյուղատնտեսական վարկի առումով նա իր նկատառումներն ուներ: Ըստ նրա՝ արտոնյալ կոչվող գյուղատնտեսական վարկը (16 տոկոսանոց) հասանելի չէ գյուղացուն, քանզի նրա գյուղական տունը կամ տնամերձը բանկը գրավ չի վերցնում: **«Այսօր քաղաքացիներն են առավելապես օգտվում գյուղատնտեսական կոչված վարկերից: Իսկ 20 կամ 24 տոկոսանոց վարկ վերցնելիս յուրաքանչյուր ամիս պիտի տոկոս փակես: Ենթադրենք վարկի տրամադրած միջոցներով գյուղացին կով է ձեռք բերել, պիտի կովը ծնի, կաթը մշակի կամ վաճառի, կովը մորթելու դեպքում՝ միսն իրացնի, որ կարողանա վարկը փակել: Մեր գյուղերում վարկ կարող է վերցնել միայն նա, ով մեծ թվով անասուններ է պահում: Այլ դեպքում վարկ վերցնելը մեծ ռիսկի հետ է կապված»,** – համոզված է Դավիթ Մովսեսյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խմբագրության կողմից

Զարմանալի բան է կատարվում մեզանում. լեռնային գյուղերը եւ հատկապես Կապանի տարածաշրջանի գյուղերն արագընթաց տեմպով մահանում են: Իսկ մենք… համայնքի ղեկավարին ենք հարցնում՝ «Ո՞րն է իրավիճակից դուրս գալու ելքը»: Գյուղապետերն էլ պատասխանում են այնքանով, որքանով…

Իրականում, մինչդեռ, Հայաստանի համար ռազմավարական նշանակության այդ հարցը վերաբերում է նախեւառաջ հանրապետության ղեկավարներին, կառավարությանը:

Եվ հարցը մեկ պատասխան ունի՝ լեռնային ամեն մի գյուղի համար փրկության ծրագիր մշակել եւ իրագործել, եթե, իհարկե, անկեղծորեն ուզում ենք փրկել լեռնային գյուղերը:

■

Իրանի դեմ պատժամիջոցների չեղարկումը եւ Արաքս գետի վրա կառուցվելիք հէկերի ճակատագիրը

էջ 1

տանքների մեկնարկը ձգձգելու պատճառների վերաբերյալ:

Որոշ փորձագետներ կարծում են, որ հէկի շինարարության եւ մյուս ծրագրերի իրագործման ճանապարհին անհաղթահարելի խոչընդոտ էին Իրանի դեմ սահմանված պատժամիջոցները:

Եվ ահա ՄԱԿ-ի ԱԽ-ն հուլիսի 20-ին հաստատել է Իրանի դեմ պատժամիջոցները չեղարկելու վերաբերյալ Իրանի եւ միջազգային միջնորդ «վեցյակի» միջեւ համաձայնագիրը, որը ստորագրվեց 2015թ. հուլիսի 14-ին (միջնորդներ՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Չինաստան, Ռուսաստան, Գերմանիա):

Ստեղծված նոր իրավիճակում հայ-իրանական հարաբերությունների մասին դեռեւս պաշտոնական խոսք չի հնչել: Այդուհանդերձ՝ արտաքին քաղաքականության ոլորտի մասնագետները կարծում են, որ պատժամիջոցների չեղարկումից հետո մեծացել է Մեղրու հէկի շինարարությունը սկսելու եւ հայ-իրանական մյուս ծրագրերին անդրադառնալու հնարավորությունը:

Հայ-իրանական նշված ծրագրերի իրագործումը, անտարակույս, նոր հեռանկարներ կբացի Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ճանապարհին:

Հուսանք, որ գոնե այս անգամ հայ-իրանական պայմանավորվածությունները թղթի վրա չեն մնա:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ամառային հանգիստ բակային ճամբարում

Մանուկների հաճույքների ճամփան բացվել է: Նախկինում մոտավորապես այսպիսի ձեւակերպումով էինք բնորոշում դպրոցականների ամառային արձակուրդների մեկնարկը, նաեւ երբ հրապարակում էինք պատրաստում նրանց ճամբարային առօրյայի մասին: Բայց անտառի գրկում ամառային հանգիստ անցկացնելը հիմա հեռավոր հուշ է թվում: Միայն նախաձեռնության եւ ձեռներեցության (որոշ անձանց եւ ձեռնարկությունների բարի կամեցողության) շնորհիվ գործում են ամառային ճամբարներ:

Ինչեւէ, չորրորդ տարին է, ինչ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության հովանավորությամբ Քաջարանում գործում է բակային ճամբար: Հուլիսի 14-ից 300-ից ավելի դպրոցական իր ամառային կյանքը լցնում է ճամբարային առօրյայով: Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանն այս դեպքում դեմ է «բակային ճամբար» ձեւակերպմանը: *«Բակային ճամբարն ընդամենը պարապ վախտի խաղալիք է, իսկ այս դեպքում մենք չենք ապահովում միայն ճամբարականների գիշերակացը, մյուս չափանիշներով չի տարբերվում նախկինում գործող ճամբարներից: Առավոտյան ինից (երբ Հայաստանի օրհներգի հնչյունների ներքո բարձրացվում է եռագույնը) մինչեւ ժամը 17-18-ը երեխաներն անցկացնում են ճամբարում, զուգակցելով ակտիվ եւ պասիվ հանգիստը, նրանց համար մարզական միջոցառումներ են կազմակերպվում, բացի այդ ճամբարների միջեւ ինտելեկտուալ խաղ պիտի անցկացվի: Տարեցտարի եւ երեխաների, եւ ճամբարի աշխատակիցների հոսքն ավելանում է, երեխաներ կան, որ երեք հերթափոխին էլ ցանկանում են մասնակցել: Ի՞նչն է ուշագրավ. երկու ճամբարը ղեկավարում են Քաջարանի դպրոցների տնօրենները: Փորձառու մանկավարժներից զատ աշխատում են տարբեր բուհերում սովորող ուսանողներ, ովքեր աշխատանքային փորձ են ձեռք բերում: Յուրաքանչյուր հերթափոխում պլանավորել ենք կազմակերպել 150 երեխայի ամառային հանգիստը, բայց ցանկացողների թիվը գերազանցում է նախատեսվածը»,* – պատմում է քաղաքապետը եւ հավելում. *«Ինքս որպես ծնող գոհ եմ, քանի որ չորրորդ տարին է, ինչ իմ երեխաները թե որպես աշխատակից, եւ թե որպես ճամբարական մասնակցություն են ունենում ճամբարի կյանքին»:*

Համայնքապետը նաեւ տեղեկացրեց, որ Քաջարանի քաղաքապետարանի սպորտի, կրթության, մշակույթի եւ սոցիալական հարցերի բաժինը, քաղաքապետարանի մյուս աշխատակիցները զբաղվում են ճամբարի աշխատանքներով: Ճամբարականներին այցելել եւ նրանց առօրյայով հետաքրքրվել են Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը, վարչության մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը: Իսկ կարեւորն այն է, որ ամռան այս տարեշրջանում մոտ 100 մարդ (մանկավարժներ եւ սպասարկող անձնակազմ) ընդգրկված է ճամբարի աշխատանքներում, ասել է թե՝ ճամբարը նաեւ սոցիալական հարց է լուծում:

Քաղաքապետարանի սպորտի, կրթության, մշակույթի եւ սոցիալական հարցերի բաժնի պետ Գայանե Համազասպյանն ավելացնում է, որ ճամբարներն ապահովված են գրենական պիտույքներով, այլ պարագաներով, բացի այդ ճամբարականներն ընդհանուր համազգեստ են կրում՝ եռագույն վզկապներ, պետական դրոշի գույները՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, խորհրդանշող շապիկներ, գլխարկներ: *«Ճամբարականների օրն անցնում է նախապես սահմանված գրաֆիկով, տեսնել է պետք, թե նրանք ճաշարանում որպիսի կարգապահությամբ են տեղ զբաղեցնում սեղանների շուրջ, ինչպես են միմյանց բարի ախորժակ ցանկանում»,* – ասում է Գ.Համազասպյանը:

Բակային ճամբարներից մեկը տեղակայված է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Կրթօջախի միջանցքներն ավելի շատ աշխույժով են լցված, քան լինում է ուսումնական տարվա ընթացքում: Երրորդ կուրսի ուսանողուհի Էլոդիա Հովհաննիսյանի փոխանցմամբ ներկայացում են պատրաստում, 23 մանուկ կա «Ծիրանիկներ» խմբում, որտեղ ընդգրկված են ամենափոքրերը:

Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի դերասան Տիգրան Ղուկասյանը չորրորդ տարին անընդմեջ ճամբարականների հետ է, յուրաքանչյուր տարի Հովհ.Թումանյանի հեքիաթների մոտիվներով փոքրիկ բեմադրություններ է պատրաստում, այս տարի ավելի շատ հանդես է գալիս որպես պարուսույց: Ազգային տարազներ հագած աղջնակների հետ պարային տարրեր էր հղկում, երբ մտանք սենյակ:

Մարիաննա Ազարյանը Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի «Հանրային կապեր» բաժնում է սովորում, երկրորդ տարին է, ինչ մասնակցում է ճամբարի աշխատանքներին: Ասում է, որ իրեն ճամբարը երեխաների հետ շփվելու հնարավորություն է տալիս, գործնական հմտություններ է ձեռք բերում, այդ նպատակով է ուսանողի իր ամառային հանգիստը «զոհել» ճամբարին:

Տեղափոխվում ենք մյուս բակային ճամբարը, որ Քաջարանի Եղիշե Չարենցի անվան թիվ 1 դպրոցում է տեղակայված: Աշխույժ ռիթմերով երաժշտությունը հեռվից է լսվում: Առանց ավելորդ պայմանականությունների մեզ թույլ են տալիս մտնել ճամբարի տարածք, որի խաղահրապարակում պարային ռիթմերի տակ վարժություններ են անում ճամբարականները: Ավագ ջոկատավար Արման Մարտիրոսյանը տեղեկացնում է, որ ճամբար հաճախող 139 հոգուց երեքն է բացակայում: Խաղահրապարակի անկյունում փչովի ջրավազանն է, ճամբարի ֆիզղեկ Գարիկ Խաչատրյանն ասում է, որ այս ամռան եղանակը թույլ է տալիս ամեն օր ճամբարականներին սովորեցնել լողի այբուբենը, իսկ ընդհանրապես դեռահասների ֆիզդաստիարակության գործն առաջին պլանին է:

Կեսօրից հետո ճամբարականների շարասյունն ուղղություն է վերցնում դեպի ճաշարան: Ճամբարի ավագ խոհարար Սասուն Խաչատրյանն այս անգամ ճաշացանկի մեջ ընդգրկել է մակարոնով ու մսով ապուր, ոլոռով խավարտ, աղցան ու թարմ մրգերից պատրաստված կոմպոտ: Ընդհանուր առմամբ ճաշարանից օգտվողների թիվն անցնում է 320-ից:

Այս տարի եւս ճամբարը գործում է երեք հերթափոխով:

«Չորրորդ անգամ անընդմեջ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրենության շնորհիվ գործում է բակային ճամբարը: Գործ նախաձեռնելն առաջին քայլն է, բայց առանց նյութական միջոցների ամենաբարի մտահղացումն իսկ մնում է որպես այդպիսին: Շնորհակալություն կոմբինատի տնօրենությանը, որի շնորհիվ սեպտեմբերի 1-ին ընդառաջ կունենանք ամառային հանգիստը վայելած դպրոցականներ», – հրաժեշտից առաջ ասաց քաղաքապետը՝ ավելացնելով, որ ճամբարում աշխատած բուհերի ուսանողներին շնորհակալագրեր կհանձնեն, նաեւ տեղեկանք՝ ուսանողական արտադրական պրակտիկան բակային ճամբարում անցկացնելու մասին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հյուր էին մայր թատրոնի դերասանները

Մարզի քաղաքներում (Սիսիան, Գորիս, Քաջարան, Կապան) հյուրախաղերով հանդես եկավ Երեւանի Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնը: Հուլիսի 24-ին Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի բեմահարթակում հանդիսատեսի դատին հանձնվեց արձակագիր Խորեն Արամունու «Անվերադարձ ապագա» լիրիկական կատակերգությունը (բեմադրությունը՝ Ժան Նշանյանի, գլխավոր դերերում՝ ՀՀ վաստակավոր դերասաններ Արմեն Մարության, Ալլա Վարդանյան): Բեմադրության մեջ արծարծվում են Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններ՝ ԱՄՆ-ում բնակվող ընտանիքի համապատկերի վրա:

Նախօրեին Քաջարանում կայացած բեմադրությունից առաջ սունդուկյանցիները Քաջարանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ այցելեցին Ագարակի գնդի Լիճքի գումարտակ: Արմեն Մարությանը զավեշտական դրվագներ ներկայացրեց հայ թատրոնի մեծերի՝ Ավետ Ավետիսյան, Դավիթ Մալյան, Թաթուլ Դիլաքյան, Ֆրունզե Մկրտչյան, կյանքից: Դերասանուհի Ջուլիետա Բաբայանը հանդես եկավ ասմունքով (Պարույր Սեւակ, Հովհաննես Շիրազ, Գեւորգ Էմին, Համո Սահյան): Թատրոնի տնօրեն, արձակագիր, դրամատուրգ Նելլի Շահնազարյանը հուշեր ներկայացրեց սպարապետ Վազգեն Սարգսյանի կյանքից, նաեւ գումարտակին նվիրեց իր «Տաք շնչառություն» գիրքը: Ջինվորներն ու սպաները երախտապարտ էին սունդուկյանցիների այցելության համար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ինչպես միշտ՝ մրցանակներով

Մարզական

Ստացվել է այնպես, որ մեկ ամսվա ընթացքում Քաջարանի մանկապատանեական մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության խմբի սաները երկու անգամ մասնակցեցին միջազգային մրցաշարի: «Սյունյաց երկիրը» նախորդ համարում տեղեկացրել էր մեր սաների հաջողության մասին Ծաղկաձորում կայացած «Հայաստանի ծաղիկներ» անվանումը կրող միջազգային մրցաշարում: Իսկ ահա մեր մարզուհիներին նոր փորձություն սպասվեց օրեր առաջ: Գյումրիում հուլիսի 9-13-ը տեղի ունեցավ գեղարվեստական մարմնամարզության «Բարեկամություն-2015» ութերորդ միջազգային մրցաշարը, որից եւս մեր սանուհիները վերադարձան մրցանակներով:

Մրցումներում, որին մասնակցում էր մեր հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության 160-ից ավելի մարզուհի, մարզադպրոցի սանուհիներից կրկին իրենց բարձր կարգը հաստատեցին Սյուզաննա Ալեքսանյանը, Նարե Մարգարյանը, Սվետլանա Ստեփանյանը՝ դառնալով հաղթողներ, իսկ Սոնա Հարությունյանը եւ Սառա Առաքելյանն արժանացան երկրորդ մրցանակի: Ի դեպ, խմբակային վարժության ձեւում մեր աղջիկները գրավեցին երրորդ մրցանակային տեղը:

Մեր սանուհիների, նրանց ծնողների, մարզադպրոցի կողմից խորին շնորհակալություն ենք հայտնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենությանը՝ մեզ մարզադահլիճ հատկացնելու, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին՝ միջազգային մրցաշարերին մեր մասնակցությունը հովանավորելու, եւ մեր մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանին՝ հոգատար վերաբերմունքի ու հետեւողական աշխատանքի համար: Մեզ կարելվույն չափով օժանդակում են մարզուհիների ծնողները, որոնց նույնպես երախտագիտություն ենք հայտնում:

Ինգա Փարսադանյան
Լիլիթ Աբգարյան
Քաջարանի համալիր մանկապատանեական մարզադպրոցի մարզիչներ

Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահը՝ Կապանում

Արդեն ավանդական դարձած Համահայկական ամառային 6-րդ խաղերի վառվող ջահը հուլիսի 26-ին հյուրընկալվեց Կապանում:

Այս խաղերի ընթացքում կվառվի հայ ժողովրդի միասնականությունը խորհրդանշող երեք ջահ (Հայաստան, Արցախ եւ Սփյուռք): Անթիլիասի մայր տաճարում Արամ Ա կաթողիկոսի օրհնությամբ վառված, Սփյուռքը խորհրդանշող ջահն աշխարհի հայաշատ քաղաքներում շրջելուց հետո Իրանի հայկական սրբավայր Սուրբ Թադեի վանքից հասավ Սյունիք:

Մարզկենտրոնի Արամ Մանուկյանի արձանի մոտ ջահն ընդունեց թեթեւ աթլետ, եռացատկորդ, միջազգային կարգի սպորտի վարպետ, ՀՀ ռեկորդակիր, ՀՀ բազմակի չեմպիոն, միջազգային մրցումների հաղթող, Եվրոպայի երիտասարդների 2013թ. աթլետիկայի չեմպիոն կապանցի Լեւոն Աղասյանը՝ այն հասցնելով Դավիթ Բեկի արձանի մերձակա հրապարակ:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի, տեղական ու մարզային իշխանությունների ներկայացուցիչներին ու բազում կապանցիներին տանտիրոջ իրավունքով ողջունեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: *«Արդեն լուրջ ավանդույթներ ձեւավորած եւ սպասված Համահայկական խաղերը զուտ իբրեւ մարզական միջոցառում չեն ընկալվում. սա Սփյուռքը, Արցախն ու Հայաստանը միավորելու, աշխարհի բոլոր ծագերում բնակվող հայերին համախմբելու, հայրենիք բերելու հրաշալի նախաձեռնություն է, շատ հայերի համար՝ առաջին անգամ մայր հողին ոտք դնելու հնարավորություն»,* – մասնավորապես նշեց քաղաքապետը եւ Համահայկական ամառային 6-րդ խաղերի մասնակիցներին մաղթեց հաջողություններ, անմոռանալի պահեր եւ առողջ մրցակցային մթնոլորտ:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը ելույթում մասնավորապես նշեց. *«Համահայկական խաղերը Հայաստանում անցկացնելը նպաստում է ոչ միայն մարզական կյանքի ակտիվացմանը, այլեւ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Խաղերի՝ տարեցտարի մեծացող աշխարհագրությունը, մարզիկների եւ հյուրերի թվի աճը վկայում են աշխարհասփյուռ հայության միասնականության ու համախմբվածության մասին:*

Հայրենիքը միավորող ուժը, առողջ ապորտային մրցակցությունը եւ կենդանի շփումները ողջ աշխարհի հայությանը եւ Համահայկական ամառային խաղերի մասնակիցներին կպարգեւեն անմոռաց սպորտային պահեր, միասնականության զգացողություն: Չեն լինի հաղթողներ եւ պարտվողներ, քանի որ այս խաղերը մեր ազգային միակամության ապացույցն են»:

Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի՝ «Դավիթ Բեկ» ներկայացումից բեմականացրած փոքրիկ հատվածով եւ Կապանի մշակույթի պալատի սաների պարային կատարմամբ եզրափակվեց ջահը Կապանում դիմավորելու հանդիսավոր արարողությունը:

Նշենք, որ Համահայկական ամառային 6-րդ խաղերի ջահի հաջորդ կանգառը Վայոց ձորում է:

Ի դեպ, 2015թ. Համահայկական ամառային խաղերը տեղի կունենան օգոստոսի 2-13-ն ընկած ժամանակահատվածում: Սյունիքի մարզի հինգ քաղաքից կմասնակցի 109 մարզիկ: Խաղերին ընդգրկվել է 17 մարզաձեւ՝ նախորդ խաղերի համեմատ 7-ով ավելի: Խաղերն անց են կացվելու Երեւանում, Գյումրիում, Վանաձորում, Ստեփանակերտում, Արտաշատում, Էջմիածնում եւ Աբովյանում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գտնված երազ

Նախակրթություն

Գորիսի Վ.Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում տարեվերջյան հանդես է: Երեխաները մեկ անգամ եւս ծնողներին, հյուրերին ներկայացնում են նախակրթարանում ստացած իրենց գիտելիքները: Նախակրթարանը նրանց մեջ դաստիարակել է հայրենասիրություն, հարգանք առ ծնողը, մարդը, ընկերը եւ այլն: Եվ հիմա նրանք թոթով լեզվով ասմունքում են, երգում հայրենիքի մասին: Նրանց կատարումները հուզում են մեծին ու փոքրին: Ու լսում եմ, թե Ռուսաստանից եկած հայ երեք երեխա, որ հյուր են, ասում են՝ ես շատ եմ սիրում Հայաստանը, որովհետեւ Հայաստանն իմ երկիրն է, իմ հայրենիքը:

Միջոցառումը վարողի հարցին, թե ինչ է հայրենիքը ձեզ համար՝ Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանն ասում է՝ ինձ համար հայրենիքն իմ ծննդավայրն է, Էջմիածինը, Երեւանը, այն ամենը, ինչ հայերեն է: Հայրենիքը Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցի համար կյանքի իմաստ է, սուրբ-սրբոց: Իսկ ավագ խմբի երեխաների համար հայրենիքն իրենց նախակրթարանն է, իրենց տունը, քաղաքը: Եվ դա նրանք արտահայտում են նաեւ պարի միջոցով: Նաեւ տարբեր լեզուներով:

Գորիս են եկել «զբոսաշրջիկներ»: Երեխաներն անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն ներկայացնում են Գորիսը: Ասել է թե՝ երեխաները նախակրթարանում նաեւ այլ լեզուներ են սովորել: Նրանք նաեւ շնորհակալություն են հայտնում Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանին՝ նախակրթարանի հոգսերին միշտ զորավիգ լինելու համար:

Ավագ խմբի ավարտական այս հանդեսը ներկաների գտնված երազն էր, որ հետ բերեց նրանց համար իրենց մանկությունը: Իսկ դրա համար մի ողջ կոլեկտիվ է աշխատել: Նախակրթարանի տնօրեն Սաիդա Ադունցի պրպտուն մտքի, նախաձեռնության, ժամանակին ու տարածությանը համապատասխան երեւակայության շնորհիվ երեխաները ներգրավվել են բազում հետաքրքիր միջոցառումներում, դարձել ինքնավստահ: Դաստիարակչուհի Ռազմելա Վանեսյանը, ով հաղթող է ճանաչվել «Տարվա լավագույն դաստիարակ» անվանակարգի մարզային փուլում, եռանդ չի խնայել երեխաների դաստիարակության եւ կրթության գործում. վկայությունը՝ ավարտական հանդեսը, հանդես, որ նման էր հրաշքի: Իսկ երաժիշտ Մերի Տոռոզյանը երեխաների միջոցառումները համեմել է երաժշտությամբ, երեխաներին սովորեցրել ընկալել երաժշտության աշխարհը: Տաթեւիկ Խուրշուդյանը բազում սերունդների է ճանապարհել դպրոց եւ զգացել երեխաների սերն ու հարգանքն իր նկատմամբ: Եվ հիմա էլ նրա սաները, որ դպրոցն են ավարտել, եկել են ու իրենց խոնարհումն ու երախտագիտությունն են հայտնում նրան: Այս նախակրթարանի նախկին սաները, որոնց մի մասն այս տարի է ավարտել դպրոցը, նվերներ են հանձնում նախակրթարանի այս տարվա շրջանավարտներին, ու նրանց ձեռքից բռնած՝ ասես առաջնորդում են դեպի դպրոց:

Միջոցառմանը ներկա էին նաեւ քաղաքի դպրոցների դասվարները: Նրանք հիացած են. այս ինչ սերունդ է գալու դպրոց՝ դաստիարակված, խելոք, գիտության բարձունքները մագլցելու վճռականությամբ, ոսկեղենիկ հայերենը դարեր տանելու, հայրենիքի սիրով հրդեհված սերունդ, որ վաղը Հայաստանի լիիրավ տերն է լինելու:

– Լույսի, հավատքի օջախ է եղել նախակրթարանը մեր երեխաների համար: Նրանք միշտ եղել են հուսալի եւ ապահով ձեռքերում, մենք երբեք չենք տագնապել մեր երեխաների համար: Շնորհակալություն քեզ, նախակրթարան, - ասում է մանկապարտեզի ծնողկոմիտեի նախագահ Հեղինե Փարսադանյանը:

Ծնող Նազելի Սարգսյանն էլ ասում է՝ տարիների ընթացքում ձեւավորված, բարի հիշողություններով ուղեկցված ու մեր կյանքի ուրախ սկիզբը կերտած նախակրթարանում գտնվեց բոլորիս երազը:

Շնորհակալություն քեզ, սիրելի նախակրթարան, իսկ երեխաներն ասում են՝ խոստանում ենք բարձր պահել քո անունը եւ ճիշտ քայլել կյանքում:

Նախակրթարանն ավարտելու կապակցությամբ Սյունիքի փոխմարզպետը շնորհավորում է երեխաներն, ծնողներին, նրանց ցանկանում արեւ ու սեր՝ ասելով. **«Դուք այն սերունդն եք, որի հետ մեծ հույսեր ենք կապում: Հոգված եմ, երկիր Նաիրիի վաղվա օրն ավելի պայծառ է լինելու՝ հանձինս ձեզ: Ահա ինչու իմ երախտագիտությունն եմ հայտնում նախակրթարանի ողջ կոլեկտիվին: Նրա յուրաքանչյուր անդամը մեծ ներդրում ունի մեր վաղվա քաղաքացիների ձեւավորման ճանապարհին»:**

Վարդան Դավթյանը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի անունից շնորհակալագրեր է հանձնում մանկապարտեզի մի խումբ աշխատակիցների:

Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցն այսպես է ամփոփում միջոցառումը.

– Ես այսօր աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ: Այդ զգացումն ապրելու իրավունքն ինձ տվեցին այսօրվա հերոսները, որ ավարտում են մանկապարտեզը: Հանդեսի ժամանակ զգացի, որ երեխաների մոտ ձեւավորվել է խմբային մտածելակերպ, որ նրանք պատրաստ են կյանքի այս նոր փուլին: Դուք Հայաստանի լավագույն քաղաքացիներն եք լինելու, դառնալու եք լավ մասնագետներ: Դուք կառուցելու եք բոլորիս երազած Հայաստանը: Ձեզ ցանկանում եմ հաջողություն, երկրին՝ խաղաղություն, ձեր ծնողներին՝ բարեկեցություն:

Ամեն սկիզբ ունի նաեւ իր ավարտը: Ամառային երեկոն լցվում է հրավառության ցոլքերով: Նախակրթարանում այսպես ճանապարհեցին ավագ խմբի երեխաներին՝ դեպի նոր կյանք: Իսկ այդ ավարտը նաեւ նոր սկիզբ է, նոր ճանապարհ:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հայտարարություն

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Գորիսի պետական քոլեջ»
ՊՈԱԿ-ը (նախկին մանկավարժական ուսումնարան) շարունակում է 2015-2016 ուսումնական տարվա ընդունելությունն
առկա (ստացիոնար) ուսուցմամբ հետեւյալ մասնագիտություններով

Մասնագիտություններ՝ ըստ միջին մասնագիտական կրթական ծրագրերի

NN	Դասիչը	Մասնագիտությունը	Առկա ուսումնառության տեւողությունը (տարի)		Որակավորումը	Տարեկան ուսման վարձը (դրամ)	Մրցութային համարվող առարկաներն ընդունելության ժամանակ			Ընդունելության քննական առարկաները		
			Հիմնական ընդհանուր կրթության հիմքով	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով			1	2	3	1	2	3
1	2203	Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	-	3	Տեխնիկ-ծրագրավորող	120 000	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
2	0313	Նախադպրոցական կրթություն	-	2	Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	Մաթեմատիկա	Հայոց պատմություն	-	-	-
3	0405	Դեղագործություն	3	2	Դեղագործ	150 000	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	Կենսաբանություն	-	-
4	2307	Զբոսաշրջություն	-	3	Զբոսաշրջության ծառայությունների մասնագետ	120 000	Հայոց պատմություն	Օտար լեզու	Հայոց լեզու գրականություն	-	-	-
5	0514	Դիզայն (ըստ ճյուղերի)	-	4	Դիզայներ	150 000	Հայոց լեզու գրականություն	-	-	Գունանկար	Գծանկար	Կոմպոզիցիա

Մասնագիտություններ՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի

1	2203	Համակարգիչների շահագործում	-	1	Համակարգիչների օպերատոր	100 000	Մաթեմատիկա	Ֆիզիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
2	2304	Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում	-	1	Վարսահարդար	100 000	Երկրաչափություն	Կենսաբանություն	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
3	2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ	3	-	Հյուսն, ատաղձագործ	-	Երկրաչափություն	Մաթեմատիկա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
4	2311	Հասարակական սնունդ	-	1	Խոհարար	100 000	Կենսաբանություն	Քիմիա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-
5	2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	3	-	Դերձակ	-	Մաթեմատիկա	Քիմիա	Հայոց լեզու եւ գրականություն	-	-	-

Ծանոթություն

Ընդունելության կարգին առնչվող հարցեր լինելու դեպքում դիմել ընդունող հանձնաժողովին:

Մեր հասցեն՝ Գորիս, Հայկազունիների 4, էլ.փոստ՝ gorisstatecollege@mail.ru

Հեռախոսահամարներ՝ (0284) 2-01-85, 2-28-42, (099) 10-10-96, (098) 10-10-96

Կայք՝ www.goriscollege.com

www.facebook.com/Gorisstatecollege

www.ok.ru/gorisipetakancollege

ԼՂՀ Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը (այսուհետեւ՝ ԵՄԱՈՒ) հայտարարում է ընդունելություն 2015-2016 ուստարվա համար, հետեւյալ մասնագիտությունների գծով՝

- Շինարարամոնտաժային եւ վերանորոգման աշխատանքների իրականացում,
- Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում,
- Ջերմաէներգետիկ սարքավորումների եւ ջերմային ցանցերի մոնտաժում եւ տեխնիկական շահագործում, շենքերի եւ կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ:
- ԵՄԱՈՒ-ն հիմնադրվել է ֆրանսահայ բարերար Եզնիկ Մոզյանի կտակի ֆինանսական միջոցներով եւ կրում է նրա անունը: Ուսումնարանը առաջարկում է ուսումնառության նոր մոտեցումներ, որոնք մշակվել են ֆրանսիացի եւ հայ մասնագետների համագործակցության արդյունքում:

Կրթօջախը ապահովում է՝

- հանրակացարան,
- մասնագիտական եւ ընդհանուր գրականությամբ հարուստ գրադարան,
- որակյալ գործիքներով ու սարքավորումներով սարքավորված արհեստանոցներ,
- մարզասրահ,
- հագեցած եւ հետաքրքիր ուսանողական կյանք:

Ուսումը ԵՄԱՈՒ-ում անվճար է, բոլոր անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները, ինչպես նաեւ յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան համազգեստը տրամադրվում է ԵՄԱՈՒ կողմից:
Շրջանավարտներին տրվելու է պետական նմուշի դիպլոմ:
Մանրամասների համար զանգահարել՝ **+(374 97) 126 276**
+(374 97) 357 193
+(374 94) 236 193

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Սեյրան Գրիգորյան

Երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ տվեց Սեյրան Վահանի Գրիգորյանը:

Ծնվել է 1956 թվականին Կապան քաղաքում՝ մտավորականներ Վահան եւ Արաքսյա Գրիգորյանների ընտանիքում: 1973-ին ավարտելով Կապանի թիվ 1 դպրոցը, ընդունվել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտ: Բուհն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք, աշխատանքի անցել Ղափանի շրջանային հիվանդանոցում՝ ռենտգենոլոգ: Վեց տարի աշխատելուց հետո 1986թ. ընդունվել է ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի օնկոլոգիական գիտական կենտրոնի ասպիրանտուրան, որտեղ ձեռք է բերել այժմ շատ ժամանակակից էնդովասկուլյար ռենտգենովիրաբույժի մասնագիտություն եւ 1989թ. ավարտելով ասպիրանտուրան, նույն կենտրոնում պաշտպանել է գիտական թեզ ու ստացել բժշկական գիտությունների թեկնածուի կոչում: Վերադառնալով Հայաստան՝ աշխատանքի է անցել՝ սկզբում Ֆանարջյանի անվան գիտական օնկոլոգիական կենտրոնում՝ կրտսեր գիտական աշխատող, իսկ այնուհետեւ՝ Միքայելյանի անվան գիտական կենտրոնի (մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո) ավագ գիտաշխատող: Միաժամանակ Սեյրան Գրիգորյանը Երեւան քաղաքի առողջապահության բաժնի գլխավոր մասնագետն էր ճառագայթային ախտորոշման գծով: 1991թ. Ղափանի շրջանային իշխանության երաշխավորությամբ եւ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով նշանակվել է Քաջարան քաղաքի հիվանդանոցի տնօրեն: Տնօրենի պաշտոնը ստանձնելուց հետո հիվանդանոցը հագեցվել է ժամանակակից սարքավորումներով, եւ հիմնվել է ախտորոշիչ բաժանմունք: Քաջարանի հիվանդանոցում աշխատել է մոտ 15 տարի եւ այդ ընթացքում հանդես եկել միայն մեծ հումանիստի կերպարով՝ նրան սիրել են թե փոքրերը, թե տարեցները, վայելել է գործընկերների, աշխատակիցների անսահման հարգանքն ու սերը:

2006թ. հիմնել է Սյունիքի մարզում միակ «Արծվաբույն» ծերանոցը, որտեղ բացահայտվել են նրա կազմակերպչական, մասնագիտական եւ հատկապես մարդասիրական ունակությունները: 2011 թվականից աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության տեսչությունում՝ գլխավոր մասնագետ: Աշխատանքային գործունեության ընթացքում դրսեւորել է իրեն որպես ստեղծարար, հմուտ կազմակերպիչ, պարզապես անսահման գթասիրտ անձնավորություն:

Հմուտ բժշկի եւ բարեսիրտ մարդու հուշն անմար կմնա ճանաչողների սրտերում:

«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Շնորհակալություն Սիրելի խմբագրություն
Ես՝ Սիսիան քաղաքի բնակիչ Գրենիկ Ազոյանս, իմ նամակով ուզում եմ Ձեր թերթի միջոցով երախտագիտությունս հայտնել Սյունիքի մարզպետարանին եւ հատկապես մարզպետ Սուրիկ Խաչատրյանին, ազատամարտիկ որդուս՝ Գեւորգ Ազոյանի բուժմանն օգնելու, սրտի ծանր վիրահատությունը Երեւանում կազմակերպելու եւ օժանդակելու համար:
Նրանց հոգատար ու սրտացավ վերաբերմունքի արդյունքում որդիս, կարելի է ասել, ստացավ երկրորդ կյանք: Նա իրեն լավ է զգում եւ վայելում է ընկերների, հարազատների եւ ընտանիքի սերն ու հարգանքը:

Հարգանքներով՝ Գրենիկ Ազոյան
Սիսիան քաղաքի բնակիչ, կենսաթոշակառու, «Սյունյաց երկիր» թերթի ակտիվ ընթերցող

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.07.2015թ.: